

ոռւսերէն՝ «Русское слово», վրացերէն՝ «Ռէզու էնտ» և  
«Բնունէքիս կարի» յայտնի դասագրքերը։

Զեյք մի հիմնարկութիւն վրացիների մէջ, ուր ջերմ  
մասնակցութիւն չունենար հանգուցեալը։

Իր կինդանութեան օրով Գոզերաշիլին օգնում ու  
նպաստում էր չբաւոր ուսանողներին և նիւթապէս աղ-  
քատ հիմնարկութիւններին։ Իր մահուսնից յետոյ թողել  
է մի համեստ գումար և վրաց մէջ գլազիտութիւն տա-  
րածող ընկերութեան» համար, որի եռանդուն գործինե-  
րից և հիմնարկիներից մէկն էր և ինքը։ Այս ընկերու-  
թեան ձեռքն է անցնում նաև վերոյիշեալ դասագրքերի  
հրատարակութեան իրաւունքը։

Ծանր է մեր հարեւն վրացիների կորուսոր և շատ  
ցաւալի Մենք միացնում ենք մեր վիշտը մեր բաղդակից  
ազգի կրած վշտին և յայտնում մեր խորին ցաւակցու-  
թիւնը։

Յարգանք վրաց մեծ դործի յիշատակին։

## Հ Ա Յ Լ Ե Զ Ո Ւ Ն

Ակի՞ լեզո՞ւն, լեզո՞ւն, թէ որ լեզուն  
ըլլայ, մարդ ինչի՞ կը լսանանի, Ազգի մը  
պահովը՝ իրարու միացնող լեզուն է եւ  
հաւատքը՝ լեզուդ փոխի՞ հաւատքդ ուրա-  
ցի՞ր, ալ ինչպէ՞ս կը նաև ըսել թէ ինչ  
ազգէ ես։

Խաչատուր Աբովեան

Հայ տպագրութեան չորսնարիւրամեակին առթիւ  
ընդհանուր շարժում մը կայ Հայ գիրն ու խօսքը յաւեր-  
ժացնելու, և յուսալի է թէ ներկայ տարին իր ընթացքը  
չըսլորած թուղթի վրայ երեցող առաջարկներն ու ծրագիր-  
ները ծնունդ տան գեղեցիկ հիմնարկութիւններու։

Հրապարակ դրուած առաջարկներին մէկն է Հայ-  
կական Ակադեմիայի մը կազմութիւնը, որով կարելի  
ըլլայ Հայ լեզուն կանոնաւորի, գեղեցիկ երկերը քաջա-  
լիրել և վարձատրել, ու ժամանակի ընթացքին հետ յա-  
ռաջ մզել Հայ մտքի պայքարը Հայերէն աշխարհարարուի

Մեր ժողովուրդի կեանքին դրագդ իրականութիւն-  
ներուն մէջ եթէ կան մսիթարական երեյթներ, անցմէ  
մին է Հայ լեզուն, — մեր սիրելի աշխարհարարը։ Ո՞ն  
գեղեցիկ կոթող մըն է դարերու պայքարը մարմնաւո-  
րող, անզուգական գանձ մը մեր ազգային թանգարանը  
նոխացնող, և մանաւանդ արտայատիչը մեր ցեղաշին  
առ առ ձեռայտկութեանց։

Առանց Հայ լեզուին ինչպէս կարելի էր արտայայ-  
տել դարաւոր տառապանքն ու մշանջնաւոր յոյսը  
Հայ ժողովուրդին, որ իր յոյզերուն և խոհանքներուն  
մէջ չի ունեցած ուրիշ հաւատարիմ աւանդապահ, բայց  
միայն իր լեզուն։

Եւ անոր մէջ թափուած ու բիւրեղացած են բոլոր  
հաւաչանքները իր սրտին, բոլոր իդէալապաշտ ձգտումները իր  
զգացողութեան, բոլոր իդէալապաշտ ձգտումները իր  
խորհուութեան, իր պարզ, գեղջկական փիլիսոփայու-  
թիւնը, իր ներշնչող և վերցնող կրօնքը, իր լատագին  
մասներգները, իր մելամադառ սիրերգները և իր խայ-  
տացող մանկական օրօնները։

Խնչ մեծ դժբաղդութիւն պիտի ըլլայ, եթէ Հայ  
լեզուն մեր անհոգութեանց, կամ ուրիշներու բոնու-  
թեան և կամ աւելի փայլուն լեզուներու հրապուանքին  
երեսն օր մը լքուէր ու ջնջուէր բոլորովին։ Հազ չէ թէ  
ժողովուրդը խօսիլ սկսէր Անզիացիներու և Ամերիկա-  
ցիներու կորովի լեզուն, կամ Թրանսացիներու խայտա-  
ցող բարբար, կամ հուժիու Գերմաններէնը, կամ զղա-  
պինդ Ռուսերէնը, կամ ջղազուրէլ Թուրքերէնը, — ան իր  
սրտին խորը ժածկուած պիտի պահէր իր զգացումներուն  
և մտածողութեան ամենէն թանկապին մասը, զոր կարելի  
չէ ուրիշ կերպով բացարելի, բայց եթէ Հայերէնով։

Երբ ժողովուրդ մը կը կողոպտես իր լեզունքն, կը  
մեղնես անոր ինքնութիւնը և կը ընծայես զայն ար  
տայայտութենէ զուրկ մարդկային էակներու խառնուրդ  
մը։

Մտարաբերեցէք Թրբախօս Հայկական գաւառները  
Ուրբան ճնշչի է հոս մթնոլորտը ոնէ Հայու համար։  
Խնչ սրտանմիկ տպաւորութիւն կը գործէ վրադ Հայ  
մանուկին խորթացած խօսելակերպը, ժողովուրդն ար-  
թուն ու մտացի է նոյն իսկ շատ մը ուրիշ տեղերէ  
աւելի, սակայն իր յարարելութեանց ու խօսակցութեանց  
մէջ չունի այն ինքնամատուց և արտայայտիչ թօնը, որ  
յատկանին է Հայախօս գաւառացին։ Միշտ չըսուած  
րան մը կայ կարծես, կը խօսին, կը կատակեն, կեր-  
գեն, սակայն րուն թելին ոչ ոք կը զարնէ, Այնպէս կը  
թուի թէ հասարակութիւնն հակայ գաղանիք մը ունի,  
որ բոնի ձեռուրդ կնքուեր է մշտնջնապէս, և ամեն  
բառ անոր կակնարկէ, բայց ոչ մէկ բառ կը մտանէ  
զայն։

Ոնխառն ուրախութեան առիթ մըն է անշուշտ  
դիտել թէ այժմ թրբախօս վայրերու մէջ նոր սերունդը  
զիթէթ ամբողջովին վերադարձած է մայրենի լեզուին,  
ու թերես յաջորդ սերունդը պատմական դէպքի մը պէս  
պիտի յիշէ Թրբախօս ժաւառութիւնը Հայ բնատեսիք-  
ներէ ներաւ էթէ այդպէս ըլլայ, յանցանքը մերն է,  
վասնկի սրանչելի պատեհութիւնը մը ունինք այժմ կորովի  
վերադարձ մը ընկելու դէպքի մայրենի լեզուն։ Ու պէտք է  
զիտուլ տալ թէ Թրբախօս գաւառներու մէջ Հայերէնի  
ընդհանրացուրդ այնքան մնա յաղթութիւնը մը պիտի ըլլայ  
ազգային շահներու տեսակէտէ, որբան պիտի չըլլար  
թերես եթէ այդ գաւառները մեղի նուիրէին իրենց  
եղած վիճակին մէջ։

Կիսովիին ի գլուխ հանուած այս մեծ յաղթանակը  
պէտք է յատուկ յիշատակութեան արժանանայ տպա-  
գրութեան աօնին առթիւ, և անոր ի կատար հանուելուն  
համար ալ մասնաւոր քայլեր պէտք է առնուին, օրինակի

համար՝ տպագրելով և ցրուելով դիւրընթեանի Հայերէն գիրքը թրբախօս և տանիքներու մէջ:

Հայերէն լեզուի խնդիրը հմենական կարեւորութիւն ունի նաև Ամերիկայի Հայոց համար:

Առ հասարակ Ամերիկահայք այնպէս կը վերաբերուին իրենց մայրենի լեզուին հետ, իբր թէ քանի մը օրուան կեանք ունի ան, յաջորդող սերունդը զայն մուցած պիտի ըլլար, և գոհ չէ թէ որչափ և ինչպէս կը գործածենք զայն:

Այնպէս չէ սակայն Հայ ժողովուրդը պէտք է այս մէծ հասարակավառութեան մէջ բարիին կողմը գործող ուժ մը ըրպար, և իր աւնեցած լաւագոյն բաները հաղորդէ Ամերիկան բաղդատարաք մանուշ ցեղին: Չէ թէ մեր ունեցածը վրայ տանք, որովհետեւ ուրիշները մեր ունեցածն աւելի լաւը ունին, այլ ինչ որ ունինք ինքնաւտիպ կերպով զարգացնենք, և հասարակաց գանձը ճօխացնենք: Ճիշդ հօս է ազգերու մէծութեան դաստիքը, —ինքնաւտիպ զարգացում: Երբ մենք մեր ունեցածը կը յարգենք, ուրիշներ ալ մեզ կը յարգեն: Մենք թանկագին լեզու մը ունինք ինչո՞ւ անոր առանձնայացաւկ շնչար ներմուծել չչախսատինք Ամերիկան թեմերուան և զրականութեան մէջ: Ի՞նչ պատճառ կայ որ այս երկրի մէծ համալարաններն ու հասարակաց զրատունները, որոնք տարեկան տասնեակ մը հազարներով գիրք ներս կ'ընդունին, իրենց ճանաչութեան մէջ ուրիշ հաստատութեանց, բայց առաջ հարկ է որ Հայերն իրենք արհամարհանքով չիերաբերուին մեր լեզուին և մեր հաստատութեանց հանդէպ Ներպացիք շատ աւելի կը ճանինան Հայերը, քան Ամերիկացիք, ճանակալով որ բազմանդամ Հայ գաղութ մը ունինք հոս Պատճառն այն է որ Ալաբամեանի այս կողմն Հայ լեզուն և Հայ հաստատութիւնները նկատուած են առ ժամանակեայ իրենութներ որ պէտք է անցնին շուտով:

Առենք մօտեցաւ երբ Ամերիկահայ Ռւսանողները ժողովրդին հետ միացած պիտի տանեն Հայ տպագրութեան տօնք: Այդ տօնք առիթ մը թող ըլլար ուրեմն Հայ զաղութը ներչնչելու Հայ լեզուի սիրով: Հայ մոտաւորական դասը և Հայ աշխատաւոր դասը իրարու հետ միացած թող յիշատակելի օր մը ընծային տօնախմբութեան այդ օրը, որ պէտք է թուական մը բանայ իրեն ուրոյն գաղութ մեր ինքնայտառէկ զարգացման գործին մէջ:

Երանի թէ Հայ ժողովուրդին այլևայլ խաւերն աւելի խորտպէս շահագրգուէին տպագրութեան չորսհարիւրամեակով, և անոր տօնախմբութիւնը ըլլար տպատարեր արտայատութիւն մը Ամերիկահայ գաղութին ազգասիրական զգացմանց:

Կարծէ որ այս առթիւ ցոյց տանք մեր Ռուսահայ և Թրբահայ եղբայրներուն, թէ հայրենիքն թէն

հեղուու կը սիրենք Հայ գիրն ու խօսք, և զայն կը պանծացնենք ի լուր Ամերիկեան հակայ հասարակութեան:

«Կոչնակ» (Ամերիկա) Ռ. Մագուական

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀՀՄԻԱԾԻՆ, 29 մայիսի.

Հայկական գրերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յօրեկեանի արթիւ պիտի հրատակուի մի բրոդիր՝ բաղկացած մի տպագրական թերթից, փոքրադիր 64 երես, հայ գրերի գիւտի և տպագրութեան պատմութիւնն ու նշանակութիւնը ժողովրդականցը դպրոցական աշտկերտներին ձրի քաժանելու համար: Աշխատանքներից լաւագոյնի համար վարձարարութիւն նշանակուում է յիսուն ուուրիի: Այդպիսի աշխատանք ունեցողներից կամ գրել ցանկացողներից խնդրուում է ուղարկել իրանց աշխատանքը մինչև 1912 թ. յուլիսի 31-ը հետեւեալ հասցէով: Ժումանցաւ, Կանցելարիա Վեհուացարքական Պատրիարքական Առաքելութեան Արքան:

Յորել Յանձնաժողովի փոխ-նախագահ:

Դարեցին վարդապետ

Անդամ-Քարտուզար՝ Դ. Ալթունեան

## II

Մուկուա, 27 մայիսի.

Ահաքին ծիծաղ յառաջացրեց այստեղ այն հայունքների կոյսը, որ ԵՄարտու անուն կըող տեղին թերթը թափել է Հկղերական ՀՀովիտի և իմ զիմին իր վերջին համարում: Այդ ողորմելի թերթի աւելի քան ողորմելի խմբագիրը կանգնել է հայելու առաջ, ինքն իրան նկարել և ենթագրել է, որ ուրիշներին դրանով հայուում է... Տէրը նրա հետ, թան միմիթարուի:

Ես նրան երբեք չեմ պատասխանի և երբեք դատի չեմ կանչի: Կայծունու պէս մարդկանց ընդունուած չէ պատասխանել, որովհետ ոչ ոք չի ցանկանայ դրանով իր արժանապատութիւնը վիրաւորած լինել, ոչ ոք նրան բանի տեղ չի գնում, և ոչ շնուրուած առ հայութիւնը կարող է հանգիստ լինել, ինձպէս ասում են ռուսները:

Բայց ես երկու քան պիտի յայտնեմ,

1) Ես ափողաւոր մարդ չեմ, այլ ամենահասարակ ծառայող և ապրում եմ միմիայն իմ ոսճիկով: Եթէ վաղը պաշտօնից զրկուեմ, քաղցած պիտի մնամ ընտանիքին հետ, որովհետ կոպէկ չունեմ յետ զցած: Կայծունին կարող է հանգիստ լինել, ինձպէս մի քօս կոպէկ նրան չի ընկնի...

2) Մի քանի տարի սրտնից առաջ Ն. Նախիջնական